քում պատահած լինի այդպիսի դէպք, բայց կարելի է հաստատ ասել, որ այդպիսի սոսկալի գործողութիւն կատարելուց առաջ մայրը կորցրած պէտք է լինի հոգեկան կարողութիւնը։ Միմիայն խելագար մայրը կարող է իւր ձեռքով սպանել իւր զաւակին. այն էլ տնտեսական պատճառներից դրդուած։ Ասանց այս չափազանցութեան՝ «նորածին մանուկը» աղքատ դասակարգի իրական ու կենդանի պատկերն է ներկայացնում և ցոյց է տալիս հեղինակի սուր դիտողութիւնն ու ժողովրդի կեանքին մօտ ծանօթ լինելը։ Գրքոյկը կարդացւում է հետաքրքրութեամբ. լեզուն պարզ ու ողորկ է։

ԲՐԻՉ

---

5. ԳՐԻԳՈՐ ՎԱՆՑԵԱՆ «Հայ հեղինակներ», ընտիր հատուածներ, միջնակարգ դպրոցների համար։ Թիֆլիս, 1905 թ.

—

Գ. Վանցեանի այս աշխատութիւնը գալիս է լրացնելու մեր դպրոցական ձեռնարկների մէջ մի շատ խոշոր բաց։ Մինչև այժմ կազմուած այդ տեսակի ընտիր հատուածների ժողովածուներից և ոչ մէկը չի համապատասխանում իւր նշանակութեանը։ Կազմողները մեծ մասամբ եղել են կամ հայ գրականութեանը ոչ բաւականաչափ ծանօթ անձինք կամ անճաշակ կամ միակողմանի և կուսակցական հայեացքների տէր։

Գ. Վանցեանը աշխատել է լինել բազմակողմանի և անկախ որ և է բնաղբօսիկ տենդենցիայից և այս կարելի է ասել յաջողուել է նրան։ Նրա գիրքը, որ բաղկացած է 262 մեծադիր էջերից, պարունակում է հատուածներ ռուսահայ գրեթէ բոլոր հայ հեղինակներից, սկսած ամենայայտնիներից մինչև անյայտները։ Կան հատուածներ և տաճկահայ գրողների գրուածներից։

Յայտնի գրողների հատուածներին կցած են և՛ նրանց կենսագրութիւնները, սակայն շատ համառօտ և՛ թերի։ Երևում է, որ կազմողը մի փոքր շտապ է գործել։ Պէտք է յուսալ, որ միւս հատորները, նաև ներկայ հատորի երկրորդ տպագրութիւնը կը լինեն աւելի լիակատար։

ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ.

—

Գրիգոր Վանցեան. Հայ հեղինակներ. ընտիր հատուածներ միջ-